# *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-2 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի արդյունքում 2017թ դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում 2017թ դեկտեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ: | Պայմանագրի փոփոխություն: |
| Փոփոխության նկարագրություն: | Կանխավճարի հանում: |
| Փոփոխության հիմնավորում: | ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-2 *Պայմանագրի 8.5 կետ:* |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
# 26.12.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-2 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան — 28. դեկտեմբերի 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Պողոսյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 26.12.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Չեղյալ համարել պայմանագրի 3.2 կետը:

1.2 Պայմանագրի 3.3 կետը շարադրել նոր խմբագրմամբ .<<3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:>>:

1.3 Հաստատել պայմանագրի Հավելված 1 Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է) :

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011018109
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ
ք. Երևան, Թումանյան 4/1
<<Ինեկոբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 2050022244621001
ՀՎՀՀ 02704414

/ստորագրություն/
Կ.Տ

Հաստատված է
N ՏԿՆ-ԳՀԱՊՁԲ-2017/18-2 գնման պայմանագրի

28 դեկտեմբերի 2017թ. կնքված
Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 2 | 30211220/301 | Համակարգիչ | | Համակարգիչ Ինտել Քորե Ի 5 7400, հիշողություն 8 Գբ ԴԴՌ 4, կոշտ սկավառակ 1 Տբ ՀԴԴ,կոշտ սկավառակ 120Գբ ՍՍԴ,տեսաքարտ 1Գբ,ներքին սկավառակակիր ԴՎԴ-ՌՎ,սնուցման սարք 550Վ, մկնիկ, ստեղնաշար (կամ համարժեք) Երաշխիք 1 տարի | հատ | 239700 | 9588000 | 40 | Ք Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 | 40 | Ոչ ուշ քան դեկտեմբերի 29 |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011018109
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ
ք. Երևան, Թումանյան 4/1
<<Ինեկոբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 2050022244621001
ՀՎՀՀ 02704414

/ստորագրություն/
Կ.Տ

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» „ВЕГА УОРЛД" „VEGA WORLD" 02704414